ԼՂԻՄ.

ՇԱԲԱԹԵ ՇԱԲԱԹ

Ստեփանակերտում նոր ուսումնական տարին, ի տարբերություն ինքնավար մարզի մյուս բնակավայրերի, իր իրավունքների մեջ մտավ միայն սեպտեմբերի 11-ին:

Դպրոցական արձակուրդի երկարացումը բնավ էլ գիտափորձեր անելու քաղաքակրթաժնի ցանկությամբ չի բացատրվում: Պարզապես շափահասները չէին հասցրել ժամանակին պատշաճ տեսքի բերել դասասենյակները, ուսումնական արհեստանոցները, լաբորատորիաները: Դրա համար նրանց հարկ չկա խստագույնս դատել: Բացի դրանից, ինչպե՞ս լիովին աշխատանքի նվիրվել, երբ մարզը մինչև օրս շրջափակման մեջ է, երբ հայրենի երկրում իր զավակներին երջանիկ տեսնելու ամեն մի ծնողի բնական ցանկությունը արցախցու համար դարձել է սահմանադրության խորքերը քշված գերբնական պրոբլեմ:

Սակայն ղարաբաղցին չի կարող վարժվել անարդարությանը: Եվ նա մտադիր չէ վճռավել: Աշխատանք և բարձր կուլտուրա, համախմբվածություն և կամք՝ սրանք են արդար նպատակին հասնելու գումարելիները: Այս միտքն էր ենչում մարզկենտրոնի բնակիչների միտինգում բոլոր հռետորների ելույթներում:

Այս բախտորոշ ժամանակներում Արցախի այսօրվա ու վաղվա հոգսերով է ապրում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, որի նիստը կայացավ անցած շաբաթ օրը: Խորհրդի անդամները քննարկեցին արդի պայմաններում ազգային քաղաքականության առընչությամբ կուսակցության պլատֆորմի նախագիծը, մշակեցին միջոցառումներ, որոնք թույլ կտան ԼՂԻՄ-ի կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում հաջողությամբ անցկացնել խաղողի բերքահավաքը, վճռի բռնվեցին այն մասին, թե ինչպես ավելի լավ քաղաքի բնակչությանը ապահովենք սննդամթերքներով: Լուրջ խոսակցություն տեղի ունեցավ Ազգային խորհրդի նախագահության առաջնահերթ աշխատանքների ծրագրի քննարկման ժամանակ:

Պատասխանատու ժամանակ է սկսվել նաև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համար, որոնք շարունակում են հանդիպումներ իրենց ընտրողների հետ, նրանցից ստանալով պատվիրաններ: Դրանցից գլխավորն է առավելագույն ջանքեր գործադրել Ղարաբաղի պրոբլեմի արդարացի քաղաքական լուծման գործում:

— Ժամանակն ապացուցում է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն անչափ յուրովի է մեկնաբանում երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացումը,— Արմենպրեսի թղթակցին ասաց Ստեփանակերտի կոմֆաղկոմի քարտուղար Հասմիկ Միքայելյանը:— Բազմակողմ նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալով իր հայրենակիցներին, ներառյալ բնակավայրերի բարեկարգումն ու ընդարձակումը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և այլն, Ադրբեջանական ԽՍՀ-ն, որի կազմի մեջ է ներկայումս ԼՂԻՄ-ը, վերջին մեկուկես տարում այդպես էլ օչինչ չի ձեռնարկել մարզի հայ բնակչության վիճակը ինչ-որ չափով թեթևացնելու համար: Ավելին, Ադրբեջանական ԽՍՀ-ն շարունակում է ամեն կերպ խոչընդոտել Հայաստանից օգնության ստացմանը, նրա հետ սերտ կոնտակտների հաստատմանը, որոնք նախատեսված են խորհրդային կառավարության որոշումներով:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի անվ. թղթ.)
Ստեփանակերտ